ՀԱԿՈԲ ՊԱՏՐԻԱՐՔ ՆԱԼՅԱՆ

ՔԱՐՈԶ ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՍԱՐԿԱՎԱԳԻ՝ ԱՌԱՋԻՆ ՄԵԾ ԵՎ ԱՆՀԱՂԹ ՎԿԱՅԻ ՄԱՍԻՆ*

«Տասներկուսը կանչեցին աշակերտների բազմությունը ու ասացին. «...եղբայրներ, ընտրեցեք ձեր միջից վկայված յոթ մարդու՝ լցված Սուրբ Հոգով և իմաստությամբ: Եվ ընտրեցին Ստեփանոսին՝ Սուրբ Հոգով և հավատով լցված մի մարդու: Ստեփանոսը, շնորհներով և զորությամբ լցված մի մարդ, ժողովրդի մեջ մեծամեծ հրաշքներ և նշաններ էր անում» /Հմմտ. Գործք Զ 2-8/:

Տասներկու առաքյալները՝ տասներկու կենդանակերպերի նմանները, կանչեցին աշակերտների բազմությանը՝ երկնային աստղերին, որոնք երկնակամարում, այսինքն՝ եկեղեցում էին հաստատված, և նրանց ասացին, /որ/ իրենց բազմության միջից ընտրեն յոթ /մարդկանց/՝ շրջագայող մոլորակների, որքերի և այրիների սպասավորության համար:

Որոնց միջից ընտրվեց Սուրբ Ստեփանոսը՝ բոլոր աստղերի մեջ ամենապայծառը, ինչպես արեգակը: Ով լցված էր Սուրբ Հոգով, իմաստությամբ և հավատով, և ով «համեմող /աղ/» անունով զարդարվեց, որովհետև «եկեղեցու պսակը» լցված էր շնորհով ու զորությամբ, ինչպես տասներկու թանկագին քարերով: Սակայն թեպետ տասներկու կենդանակերպերը /երկնքում/ ավելի բարձր են, քան արեգակը, որ նրանց շուրջը մեկական ամիս պտտվելով է կատարում իր շրջանը, այսպես և տասներկու առաքյալները, թեպետ իշխանությամբ ավելի բարձր էին, քան Ստեփանոսը, բայց նա նրանցից ներքև շրջելով ինչպես արեգակ՝ նրանց սպասավորման գործն էր կատարում և իր շրջագայության ժամանակ բոլորից պայծառ երևում:

Ա. Արդ՝ վերոհիշյալ թանկագին քարերը զետեղված էին այս պսակին, ով ամենանշանավորն էր այն աստղերի՝ հավատացյալների մեջ, որովհետև ինչպես բոլոր լուսատուների պսակը՝ արեգակը, լի է լույսով, այնպես էլ Սուրբ Ստեփանոսը՝ Սուրբ Հոգով: Արեգակը փայլում է բազում ճառագայթներով, իսկ Ստեփանոսը՝ անհամեմատելի իմաստությամբ:

Արեգակը լույսին ենթակա /գոյակցությունների/ վրա բազում ներգործություններ է ունենում՝ ջերմացնում է, /բույսերին դարձնում/ պտղաբեր, տալիս բոլոր գույները զատորոշելու հնարավորություն, զետեղված է բարձունքներում և փութում է շարժման, հանելի է տեսնելու համար:

Նաև Սուրբ Ստեփանոսը նախ ջերմացրեց բոլոր մարտիրոսներին՝ ի սեր Քրիստոսի /իրենց/ արյան հեղման համար:

---

* Գրաբար ընագիրը տե՛ս Երևան, Մատենադարան, ձեռագիր թիվ 4190 (1758 թ.), թերթ 360ա–367ա:

Ինչպես ապակին, իր ոսպնյակի մեջ ընդունելով արեգակի ճառագայթների ջերմությունը, այրում է բոլոր իր ջերմությունը ընդունողներին, այնպես և բոլոր վկաները, իրենց սրտի «ոսպնյակի» մեջ ընդունելով Ստեփանոսի սիրո ջերմությունը, ջերմացան Քրիստոսի սիրով: /Եվ ինչպես/ արեգակը՝ մարմնին, /այնպես էլ իրենց/ սատանային հրդեհելով՝ այրեցին և մոխրացրին:

Ուստի Նարեկացին Սուրբ Հոգուն /Նվիրված/ քարոզում ասում է. «Սուրբ Ստեփանոսի մարտիրոսական նահատակությամբ զորացան վկաները»:

Սուրբ Եվսեբիոս Եմեսացին Նախավկային Նվիրված ճառում ասում է. «Բոլոր նրանք, ովքեր Ստեփանոսի հետ էին, Ստեփանոսին էին նայում և նրան նմանվում, իսկ Ստեփանոսը՝ Հիսուսի նշանին»:

Երկրորդ՝ արեգակը /նույսերին/ դարձնում է պտղաբեր: Ո՛չ միայն երկրի վրայի տունկերը, այլև՝ հողաշերտի տակ եղած հրաբալելիներին, այնպես և Սուրբ Ստեփանոսը պտղաբեր դարձրեց իրենից հետո /ապրած/ բոլոր վկաներին, որպես և Աբելն իր գոյությունից հետո մինչև Քրիստոս: Քանի որ ինչպես ոչինչ չի աճում և պտղաբերում /այնտեղ/, որտեղ արեգակի ճառագայթը չի հասնում, այնպես էլ Սուրբ Ստեփանոսը իմանալի արեգակից՝ Քրիստոսից, որպես թափանցիկ շղարշ ընդունելով ճառագայթը, այլոց մեջ թափանցելով, նրանց դարձնում է պտղաբեր, ոչ միայն նրանց, ովքեր երկրի վրա էին, այլև ովքեր երկրի մեջ՝ շիրիմներում հանգուցյալներ էին: Նրանց տալով հարության հույսը, թե մահը նինջ է: «Մի՞թե նրանք, ովքեր ննջեցին ի Քրիստոս, կորա՞ն արդյոք, քավ լիցի» /տե՛ս Ա Կորնթ. ԺԵ 18/:

Սուրբ Եվսեբիոսն ասում է. «Սա՛ է մեծ մարդը, ով իր ընկերներին բացեց գեղեցիկ դուռը և հայտարարեց, թե այսուհետև մարդկանց մահը նինջ է, որովհետև ահա /մահվան/ խայթոցը խորտակվեց /տե՛ս Ա Կորնթ. ԺԵ 55/:

Նաև Սուրբ Աթանասը նրան Նվիրված ճառում, «Տե՛ր, սա մեղք մի՛ համարիր դրանց» /Գործք Է 59/ խոսքը նկատի ունենալով, ասում է. «Այսպիսի պաղատանքների շնորհիվ, նրա /նահատակությունից/ հետո հավատացյալների դասերը բազմացան ազգությամբ շատ հրայեցիներով, որոնցից մեկն էլ Սողոսն էր՝ Բենիամինյան ցեղից հափշտակող գայլը, որ առավոտյան ուտում էր Ստեփանոսին, իսկ երեկոյան պատառ բաժանում:

Երրորդ՝ արեգակը բոլոր գույները զատորոշելու հնարավորություն է տալիս: Իսկ Սուրբ Ստեփանոսը իր կույսերի մոտ հարգելի է դարձնում կուսության պատիվը, ուստի նրա հրեսը, ի նշան շնորհված կուսության, փայլեց հրեշտակի նման: Վարդապետներին ցույց էր տալիս, որ վարդապետության պսակը փափագելի է, ուստի նրան /Նվիրված/ շարականում ասվում է. «Քահանանե՛ր, երկնային զորքերի հետ Սուրբ Ստեփանոսի աստվածաբանությամբ, Քրիստոսի՛ն գովեցեք» /Շարակնոց, Ս. Էջմիածին, 1888, էջ 66/ մարտիրոսների համար ընդունելի վկայական պսակին :

Սուրբ Ստեփանոսի մասին ասվում է. «Վկաների մեջ մեծը և երկնաճաղաճացին՝ հավիտենական թագավորի զորականը, անպարտելին և ամենքին հաղթողը քարերի բազմությունը իր վրա էր հավաքում ինչպես անուշահոտ ծաղիկներ՝ դյուրին և հեշտալի /մի բան/ համարելով բոլոր /քարերի/՝ իր վրա գալը»:

Չորրորդ՝ արեգակը գետեղված է բարձունքներում: Նաև Ստեփանոսի մասին կարող ենք ասել: /Այս խոսքերը/՝ «Մի՞թե քո երամանով է արծիվը /ադ/ բարձրանում և իր բույնը դնում բարձունքներում» /հմմտ. Հոբ ԼԹ 27/:

Արծիվը վերին երկնակամար բարձրանալով՝ տեսնում է ծովի խորքերը: Իսկ Ստեփանոսը կանգնելով երկրի վրա՝ տեսնում էր երկինքը բացված և Հիսուսին՝ Հոր աջ կողմում /տե՛ս Գործք Է 55/: Ո՛վ արծվի աչքերի սրատեսություն:

Սուրբ Աթանասը Հայր Աստծու բերանով ասում է. «Եթե տակավին մարմնի մեջ լինելով տեսնում ես Աստծուն, որ բոլոր գերերկրային բնություններին անտեսանելի է, ապա դրանից իմացի՛ր Իմ նկատմամբ քո անզուգական սիրո պատիվը, որովհետև նույնիսկ Իմ Որդու հարազատությունը եայտնեցի քեզ, որպեսզի երկնակամարում տեսնելով, ճանաչես նրա պատիվը»:

Իսկ /Գրիգոր/ Նյուսացին ասում է. «Նա մարմնի բնությանն /օրենքներից/ դուրս, նախքան նահատակվելը, իր մաքուր աչքերով տեսավ երկնային դռները բացված, միաժամանակ նրան երևացին /երկնքի/ խորքերը, և նույն ինքը տեսավ Աստվածային փառքը, այլև փառքի ճառագայթները»:

Սուրբ Բարսեղն էլ ասում է. «Հավատով երկնակամար վերացավ, թանձր[1] բնությամբ, ինչպես բոլոր մարդիկ են, և ականատես եղավ ամբողջ երկնային փառքին: Մովսեսը նյութական ապագայի փառքը տեսավ, իսկ Ստեփանոսը՝ Աստծու փառքը և Քրիստոսին»:

Հինգերորդ՝ արեգակը փութում է շարժման, իսկ Սուրբ Ստեփանոսը՝ այրիներին սպասավորելու, բայց նաև վարդապետելու, քանի որ մինչ առաքյալները լրեցց որպես պաշտոն ընտրեցին միայն քարոզը՝ հրաժարվելով այրիներին սպասավորելուց, Ստեփանոսը կատարում էր սպասավորության պաշտոնը, և /դեռ/ քարոզում էր, մեծամեծ հրաշքներ և նշաններ անում /տե՛ս Գործք Զ 8/: Այդ իսկ պատճառով Գրիգոր Նյուսացին նրան նվիրված ներբողում ասում է. «Ստեփանոսին մի՛ առանձնացրու առաքյալներից»: Շնորհով լցված և իմաստությամբ վեհ Ստեփանոսը Սուրբ Հոգու միջոցով կանչված էր առաքյալներին որպես օգնական: Եվ ո՛չ ոք սպասավոր անվանվելու պատճառով /համեմատած/ առաքելական շնորհի, նրան երկրորդ թող չկարծի: Քանի որ նաև Պողոսն է իրեն Քրիստոսի սպասավոր կոչում /տե՛ս Կող. Ա 23, 25/: Քրիստոսի սպասավորն եմ և ես[2], և ինքը /Ստեփանոսը/ ոչ պակաս գիտե, քան լավագույն աշակերտները:

Նաև Սուրբ Բարսեղն է ասում. «Իր բազմափայլ առաքինությամբ այրիներին և որբերին խնամելու շնորհը ընդունեց, որովհետև կաթողիկե եկեղեցում աղքատներին դարման տալուց ավելի մեծ և ճշմարիտ շնորհ չկա»: Իսկ առաքյալները այս /շնորհը/ ոչ թե մի պատահական մարդու փոխանցեցին, այլ, ինչպես ասում է, «Ընտրեցին Ստեփանոսին՝ Սուրբ Հոգով և հավատով լցված մի մարդու» /Գործք Զ 5/:

Վեցերորդ՝ արեգակը հաճելի է տեսնելու համար, /ուստի / նրա երեսը տեսան հրեշտակի երեսի նման /տե՛ս Գործք Զ 5/: «Քաղցր է լույսը, և աչքի համար հաճելի է արեգակը տեսնել» /հմմտ. Ժող. ԺԱ 7/: Եվ ինչպես արեգակն աչքն է աշխարհի, այնպես և Սուրբ Ստեփանոսը լուսատու աչք է բոլոր վկաներին: Որովհետև մարտիրոսների աչքերի համար հաճելի է տեսնել իրենց արեգակ Սուրբ Ստեփանոսին:

Բ. Այս պսակի վրայի թանկագին քարը՝ Սուրբ Հոգու շնորհների լիությունն է, որով և լցվեց իմաստությամբ: Ուստի Պողոսը, խոսելով Սուրբ Հոգու պտղի՝ ծրի շնորհի /հմմտ. Մատթ. Ժ 8/ մասին, ասում է. «Մեկին Հոգուց տրված է իմաստության խոսք, /մյուսին՝ գիտության խոսք.../» /Ա Կորնթ. ԺԲ 8/: Իսկ Ստեփանոսի մասին գեղեցիկ ոճով ասվում է. «Ընտրեցին Ստեփանոսին՝ Սուրբ Հոգով և իմաստությամբ լցված մի մարդու» /Գործք Զ 5/:

---

[1] Շոշափելի բնությամբ, մարմնապես:

[2] Դժվար չէ նկատել, որ քարոզի հեղինակ Կ. Պոլսի Պատրիարք Հակոբ Նալյանը ակնարկում է իրեն:

Մեկը Ստեփանոսի մասին /ասում է/. «Լիքտող փայտից տապանակ էր. ներսից և դրսից պատված մաքուր ոսկով. լի էր բոլոր ծրի պարգևներով»:

Նախ՝ ուներ իմաստության պարգևը, այն էլ առատապես. որովհետև չէին կարողանում դեմ կանգնել այն իմաստությանը և Սուրբ Հոգուն, որով խոսում էր /տե՛ս Գործք Զ 10/: Քանի որ աստվածայինի և հոգևորի ճանաչումը իմաստությունն է, որով վարժված միտքը հայտնապես խոսում է /այն/. ինչ ուսուցանում է, իսկ Ստեփանոսն ատյանի մեջ, մեծ բազմության առաջ, խոսեց աստվածայինը /գործերի/ մասին, Աբրահամից սկսած մինչև Քրիստոս: Եվ այսպիսի իմաստության սպասավոր լինելով՝ իրրև վարձ ընդունեց անմահությունը, ըստ այնմ. «Ովքեր պայծառեցնում են ինձ, պիտի ընդունեն հավիտենական կյանք»:

Երկրորդ՝ ուներ գիտության պարգև: Իսկ գիտության պարգևը երկրայինների մասին նաև մարդկանց քաջապես խոսելու շնորհն է: Իսկ Ստեփանոսը նաև սրանով զորացած՝ լիբիացիներին, կյուրենացիներին, ալեքսանդրացիներին, կիլիկեցիներին և ասիացիներին պապանձեցնում էր՝ ցույց տալով նրանց ուսմունքի սնոտիությունը: Ուստի Սուրբ Գրիգոր Նյուսացին ասում է. «Բոլոր կողմերից մարդիկ վիճում էին նահատակի նշմարտության դեմ», սակայն ներկաներին թող հայտնի լինի, թե «ստության հայրը» այդ մարդկանց միջոցով պայքարում էր նշմարտության, այսինքն՝ Ստեփանոսի դեմ, սակայն նշմարտությունը ստի նկատմամբ հաղթանակող էր, որովհետև նահատակը հեշտությամբ պարտության էր մատնում մոլորության գործակիցներին:

Նաև՝ շատերին համոզում էր գիտության պարգևով, տանջանքների երկյուղով և սիրո վարձատրությամբ: Եվ այս՝ Սուրբ Ստեփանոսն անում էր երբեմն թախանձելով՝ իր թշնամիներին հայրեր և եղբայրներ կոչելով, և երբեմն սպառնալով, թե դուք միշտ Սուրբ Հոգուն հակառակ եք /տե՛ս Գործք է 51/:

Երրորդ՝ ուներ կատարյալ հավատ, որով և մաքրված էր իր սիրտը. «Հավատով մաքրելով նրանց սրտերը» /Գործք ԺԵ 9/: Եվ քանի որ հավատն է հուսացված բաների հաստատումը /տե՛ս Եբր. ԺԱ 1/, ըստ այսմ՝ Սուրբ Ստեփանոսը ընտրելով հուսալի բարի Քրիստոսին, իր երանության հավիտենական առհավատչյա, ատյանում /կանգնածներից/ միայն ինքը [Տիրոջը] տեսավ:

Դարձյալ՝ հավատը պայծառանում է հալածանքներով, ուստի Ստեփանոսն իր քարկոծման ժամանակ աղոթում էր քարկոծողների համար, որը հավատքի պայծառության նշան է:

Չորրորդ՝ ուներ նաև բժշկության ծրի շնորհ, ուստի ասվում է. «Ժողովրդի մեջ մեծամեծ նշաններ էր անում»: Իսկ «նշան» ասելով իմացի՛ր մահացու թույնի խմելն ու չվնասվելը, ձեռքի մեջ օձ բռնելն ու չվախենալը, դևերին սաստելն ու հալածելը /տե՛ս Մրկ. ԺԶ 18/:

Հինգերորդ՝ ուներ նաև զորության շնորհ, ըստ որում զորությամբ կատարում էր այնպիսի բաներ, որոնք վեր էին /մարդկայինը/ բնության կարողությունից:

Ստեփանոսի մասին ասվում է. «Շնորհներով և զորությամբ լցված մի մարդ էր, որ նշաններ էր անում» / Տե՛ս Գործք Զ 8/:

Վեցերորդ՝ ուներ նաև մարգարեության շնորհ. անցյալը հայտնի դարձրեց՝ սկսելով /խոսել/ Աբրահամից մինչև Քրիստոս /տե՛ս Գործք է/, իսկ ներկայի գաղտնիքներից՝ դեմ հանդիման տեսնելով Քրիստոսին, ինչպես Հովհաննես Մկրտիչը. մատնացույց արեց /նրան/ /տե՛ս Մատթ. Գ 3/:

Յոթերորդ՝ ուներ նաև ընտրյալ հոգի, այսինքն՝ ստեղծված հոգիների մեջ ընտրյալ էր, և «ուներ» Անստեղծի Սուրբ Հոգին. «Ստեփանոսը /լցված/ էր Սուրբ Հոգով»: Եվ հակառակողները չէին կարողանում նրան դեմ կանգնել: Ընտրված էր և Սուրբ Հոգի Աստծուն անստեղծ էր ճանաչում: Եվ այլոց, ովքեր հակառակ էին

իրեն, /հանդիմանում էր՝ ասելով/. «Դուք միշտ Սուրբ Հոգուն հակառակ եք» /Գործք է 51/:

Ութերորդ՝ ուներ նաև գեղեցկախոսություն և այլ լեզուների /իմացություն/: Ընդ որում լիբիացիներին, կյուրենացիներին և այլոց հաղթում էր նրանց լեզուների իմացությամբ, որովհետև Ստեփանոսը հարյուր քսանից էր, Սուրբ Հոգու իջման ժամանակ նա հրեղեն լեզուներով ընդունեց տարբեր լեզուների իմացությունը:

Իններորդ՝ ուներ նաև տարբեր լեզուներ թարգմանելու /կարողություն/, որը /խոսք/ հասկանալու և մեկնաբանելու համար մտքի լուսավորություն է: Սուրբ Ստեփանոսը Սուրբ Գրքի իմացությունն ուներ ձրի շնորհներից, որով և մեկնաբանում էր, ինչպես Մովսեսի խոսքը Քրիստոսի վերաբերյալ. «/Ձեր/ Տեր Աստվածը /ձեր եղբայրների/ միջից ինձ նման մարգարե պիտի հանի» /Գործք է 37/:

Գ. Այս պսակի վրայի թանկագին քարը Սուրբ Գրքի Աստվածաբանությունն էր: Իսկ Աստվածաբանությունը խոսք է Աստծու և աստվածայինի մասին: Սուրբ Բարդուղիմեոսի խոսքերով ասած. «սակավաբան, սակայն բազմախորհուրդ»: Սուրբ Ստեփանոսի աստվածաբանությունն այսպիսին էր, ուստի նա խոսքը սկսում էր Աստծուց՝ ասելով. «Փառքի Աստվածը երևաց մեր հորը՝ Աբրահամին» /Գործք է 2/: Նրա խոսքը նաև Աստծու գործերի մասին էր. «Զորությամբ Աստծու միջոցով Եգիպտոսի /գերությունից/ Իսրայելի փրկության մասին» /տե՛ս Գործք է 36–40/: Իսկապես որ Ստեփանոսի աստվածաբանությունը «սակավաբան էր, սակայն բազմախորհուրդ», որովհետև պատրաստ էր առ Աստված ընթանալու, խոսքը չէր հրկարում, /թեպետ ասելիքի միտքը տարբեր ձևերով էր արտահայտում/ և այն էլ, որպեսզի չխոչընդոտեն նրան առ Աստված ընթանալուն: Սուրբ Պրոկղը նկատելով Ստեփանոսի աստվածաբանությունը՝ ասում է. «Ստեփանոսը շնորհների բուրվառ էր, որպես խունկ սրբությամբ բուրելով, աշխարհի չորս կողմերում պանծալով աստվածաբանում էր խաչյալին, մեկնաբանում օրենքները և բացատրում մարգարեությունները, քարոզելով դրանցում նառագող Քրիստոսին»:

Մարմնացյալին անհառաբար աստվածաբանելու պատնառով հակառակվողները չէին կարողանում դեմ կանգնել իմաստությանը և Հոգուն, որովհետև բնությամբ բոլոր ծնվածներից առավել էր նառելու մեջ:

Դ. Այս պսակի թանկագին քարը Աստծու առաջ հրեշտակի երեսով երևալն էր, որը նրա կուսության օժիտն էր, որովհետև, ըստ /Գրիգոր/ Նյուսացու. «Կուսությունը միայն անմարմին հրեշտակների հատկությունն է, իսկ մայրիկ, /ըստ իրենց/ սովորության, չամուսնացածներին էլ են անապական կոչում»:

Սուրբ Եվսեբիոս եմեսացին ասում է. «Նրա երեսները երևացին հրեշտակի երեսի նման» /Գործք Զ 15/, որովհետև նա, ով փութում էր պաշտել Հիսուսին, արժանիորեն կերպարանափոխվեց Նրա պատվի համար, Ով պաշտվում էր հրեշտակների կողմից:

Եվ որովհետև Մովսեսը, Սինա լեռան վրա հրեշտակի հետ խոսելուց հետո, պայծառ դեմքով իջավ Իսրայելի որդիների մոտ, /ապա/ Հիսուս ինչո՞ւ չպիտի պայծառեցներ նրա դեմքը, ով տակավին մարմնի և պատերազմի մեջ լինելով կարգվեց երանելիների դասում, որի համար արժանի էր իր դեմքի վրա կրելու հրեշտակային պայծառությունը:

Սուրբ Աթանասը Հայր Աստծու բերանով նախավկային ասում է. «Եթե տակավին մարմնի մեջ լինելով տեսնում ես Աստծուն, որ բոլոր վերերկրային բնությունների անտեսանելի է, ապա դրանից իմացի՛ր Իմ նկատմամբ քո

ռնգուգական սիրո պատիվը, որովհետև նույնիսկ Իմ Որդու հարազատությունը հայտնեցի քեզ»:

Սուրբ Գրիգոր Նյուսացին ասում է. «Ինչպես հուրը, որի մեջ վառվող նյութ գցելիս, բոցերը երկարում է մինչև բարձունքները և առավելագույն լույս առնակում, այսպես և Սուրբ Հոգին, հասնելով Սուրբ Ստեփանոսի մեծարգնակ պտին, հանձինս նրա առավել հայտնի էր դարձնում շնորհների շառավիղները»:

Սուրբ Եվսեբիոսը ասում է. «Մինչ Ստեփանոսը մարմնի մեջ էր, այն հոանդուն սիրո համար, որով զինված էր, հրեշտակի կերպարանք ստացավ»:

Ե. այս պսակի թանկագին քարը առաքյալների պատարագելու ժամանակ սարկավագական սպասավորության պաշտոնն էր, որպեսզի այն մեծ պաշտոնով չպատահեր սատանայի փորձությանը: Առաքյալներն այդ նույնին /սարկավագությանը/ ավելացրեցին որբերին և այրիներին սպասավորելը, թեպետև այդ նվաստություն չէր նրան, որովհետև Նյուսացին ասում է. «Սուրբ Հոգու միջոցով կոչված էր առաքյալներին օգնության, և ոչ ոք սպասավոր կոչվելու համար /համեմատած/ առաքելական շնորհի նրան երկրորդ թող չկարծի»:

Քանի որ նաև Պողոսն է իրեն սպասավոր կոչում /տե՛ս Կող. Ա 23/, նույնիսկ Տերը ամոթ չհամարեց իրեն սպասավոր կոչել /տե՛ս Մատթ. Ի 28/:

Որովհետև փոքր սպասավորության միջոցով արժանանում են երկնքի արքայության մեջ մեծ կոչվելու, ուստի և Տերը, կամենալով նրան մեծ /կոչել/, դրեց որբերին և այրիներին սպասավորման գործին: Որպեսզի ուր Տերը լինի, այնտեղ և /նրա/ պաշտոնյան. «Ուր ես եմ, այնտեղ կլինի Իմ պաշտոնյան: Եվ եթե մեկը ինձ պաշտի՝ նրան կպատվի Իմ Հայրը» /հմմտ. Մատթ. ԺԲ 26/:

Իսկ եթե մինչդեռ մարմնում էր, Հայր Աստծուց ևս պատվվեց, ինչպես վկայում է նախավկան. «Նրան պատվեց՝ Իրեն և Միածնին ցույց տալով», որքան որ նա կարող էր տեսնել, ապա որքա՞ն ևս առավել հաղթությունից հետո:

Զ. Այս պսակի թանկագին քարը համոզիչ քաղցրաբանությունն է, երբ ասում էր. «Արդ, եղբայրներ և հայրեր, լսեցեք ինձ»: Այսպես ասում էր անոխակալ ձայնը: Այսպես էր ասում նաև /Գրիգոր/ Աստվածաբանը արիոսականներին. «Տակավին եղբայրներ եմ կոչում ձեզ, թեպետ և եղբայրության ոչ մի պարագա չունեք»:

Սուրբ Ստեփանոսը Ալեքսանդրիայում հայտնի էր նաև որպես երաժիշտ: Քնար նվագելիս, երբեմն հնչեցնելով պատերազմական մեղեդի, /ներկաներին/ սեղանից վեր բարձրացնելով զենք վերցնել էր տալիս և երբեմն էլ խրախնական՝ /սեղան/ գցելով բազմեցնում ուրախության: Մեծ և առաջին վկան այսպես էր անում. գազանաբարո մարդկանց համոզում էր՝ /նրանց/ կոչելով «հայր» և «եղբայր»: Իսկ նրանց չանսալու դեպքում նրանց անվանում էր «Սուրբ Հոգուն հակառակողներ»:

Է. Այս պսակի թանկագին քարը՝ իրեն քարկոծողների համար աղոթելն էր: Սուրբ Բարսեղը զարմանալով այս ամենի վրա՝ ասում է. «Ո՛վ երանելի Ստեփանոս, ի՞նչ ես անում, քարկոծողներիդ անիծելու փոխարեն տակավին աղոթում ես՝ ասելով. «Տե՛ր, սա մեղք մի համարիր դրանց» /Գործք է 59/: Եվ ասում է. «Ես հող եմ և մոխիր. ինչպե՞ս կարող եմ իմ Տիրոջը և վարդապետին նմանվել»: Եվ սա անում էր ոչ թե սնափառությամբ, այլ՝ գթածությամբ, հոանդուն սիրով նրանց անշնչելի մեղքերին քավություն էր խնդրում իր Տիրոջից: Բոլորի Փրկիչը լսելով և ընդունելով նրա ջերմեռանդ սրտի խնդրանքը՝ անհապաղ շնորհեց: Սպանության գլխավոր Սողոսին, որ մինչ այդ հափշտակված էր սատանայից, հայտնեց Իր /աստվածությունը/: Մահկանացուներից ոչ ոք չստացավ այսքան գութ և համբերություն:

Սուրբ Աթանասը Ստեփանոսի աղոթքի մասին ասում է. «Չէիր ձգտում սխալական թշնամիներից անպարտ լինել, այլ Հոգու միջոցով առաջիկան նկատի ունենալով՝ ասում էիր. «/Նույնիսկ/ մեծ հանդգնության դեպքում տուր զղջման երկյուղ, մի՛ թույլ տուր առանց սրտի անհույս թլփատության մեռնել, նրանց սրտում բորբոքիր Հոգու հուրը, որպեսզի Քո շնորհների զորությամբ և իմ արյամբ սրբվելով, ազատվեն այս ամբաստանությունից»: Այդ իսկ պատճառով այսպիսի պաղատանքների միջոցով, նրանից հետո բազմացան հավատացյալների դասերը: Ստեփանոսի այս ձայնը ոխակալների սրտից ջնջեց մեգը և մառախուղը: Այս ձայնի մասին էր ասում Իսահակ նահապետը Հակոբին՝ «Ձայնդ Հակոբի ձայնն է» /Ծննդ. ԻԷ 22/: Նույն օրինակը վերցրու Սավուղի՝ Դավթին ասածից. «Այդ քո՞ ձայնն է, որդյա՛կ իմ Դավիթ» /Ա Թագ. ԻԴ 17/:

Երկնային հարսը՝ Սիոնը կոչ է անում Սուրբ Ստեփանոսին. «Եկ Աստծու Որդու հովանու ներքո, ցո՛ւյց տուր մեզ Քո դեմքը, որ արյամբ կարմիր ներկված վարդից գեղեցիկ է, և լսելի՛ դարձրու մեզ Քո անհիշաչար ձայնը, որ արտույտի /ձայնի/ պես քաղցրագույն է»:

Սուրբ Գրիգոր Նյուսացին ասում է. «Մինչ նետված քարերի տակ թաղվում էր, սպանողների փոխարեն ի՛նչ էր խնդրում, ինչպես էր թախանձում քարկոծողների համար, որպեսզի երբա նորահավատներն ուսանեն քրիստոնյաների համբերությունը, որը Ստեփանոսը կիրառում էր տրտմելու փոխարեն»:

Նրանք գազանաբար և բուռն կատաղությամբ, սուրբ նահատակի շուրջը կանգնած, ինչ-որ մի անորոշ նպատակի համար քարկոծում էին, իսկ նա, որպես մի քահանա, ըստ հոգևոր օրենքի, պանծալի զոհ էր մատուցում իր հոգին ու մարմինը: Եվ երիտասարդների մոխիրների փոխարեն իր ծեռքից հոսեցնելով արյունը, իր դեմ մեղաչածներին հաշտեցնում էր Աստծու հետ, Ով երկնային խորանների տեսնում էր՝ ասելով. «Տե՛ր, սա մեղք մի համարիր դրանց»:

Եվ Նա՝ իսկ, ջնջում էր նրանց մեղքը, որ իրենց անօրեն ձեռքերով գործում էին:

Ը. Այս պսակի թանկագին քարն այն է, որ մանավանդ իրեն քարկոծողներին ինքն էր քարկոծում, /ինչպես որ մեկն իր գլուխը հարվածելով վեմ քարին իր գլուխն է փշրում, քան թե քարին ցավ պատճառում/, քանի որ, ինչպես Նյուսացին է ասում. «Նախ՝ խոսքով հաղթեց լիբիացիներին, կյուրենացիներին և այլ իմաստուններին: Եվ երկրորդ՝ հաղթում էր հաղթվելիս, և այդ կերպով նրանց քարկոծում»:

Սուրբ Աթանասը Քրիստոսի /գլխին/ փշե պսակ դնելու մասին ասում է. «Փշերով առավելապես սատանային էին խոցում, քան թե Քրիստոսին, որովհետև առավելապես սատանայի դեմ համառելով ենք հաղթում, քան թե վրեժխնդիր լինելով: Նաև Նյուսացին է ասում. «Ինչպես քաջահմուտ գոտեմարտիկները մարմնով խոնարհվելով հակառակորդի դեմ դժվարին ճիգով, հմուտ շրջադարձությամբ գլորում են հակառակորդին, այսպես և մեծն Ստեփանոսը, գետնին խոնարհվելով, ավելի դժվարին հակառակորդին գլորում էր, որպեսզի այստեղից առաքյալներին դեպի տիեզերք ընթացք լինի»: Ապա թե ոչ նրա սպանումով հրեաների ամբոխը առաքյալների դեմ չէր մոլեգնի: Թերևս Ավետարանի շնորհը միայն Երուսաղեմացիների մոտ պարփակված կլիներ. այսպես ընկալեց խոսքը Սամարիան: Փիլիպոսից փրկություն հղավ /իր իսկ մկրտած/ Ներքինուն: Տեսնո՞ւմ ես անհաղթելի Ստեփանոս նահատակի /վարքի / ուսանելի կողմերը, կամ թե քանի՞ գլորումով խորտակեց հակառակորդին:

Սուրբ Աթանասը ասում է. «Վկաների մեջ մեծը և երկնաճաղաճացին, թագավորի անհաղթելի զորականը, անպարտելին և բոլորին հաղթողը քարերի բազմությունը հավաքում էր իր վրա, ինչպես անուշահոտ ծաղիկներ դյուրին, և հեշտալի /մի բան/ համարելով բոլոր /քարերի/ իր վրա գալը»:

Սուրբ Պրոկղը Տիրոջ բերանով Սուրբ Ստեփանոսին ասում է. «Մի՛ երկնչիր ինձ վրա նետված քարերից, որովհետև այդ քարերը աստիճան են դառնալու դեպի երկինք: Մի՛ երկնչիր ինձ վրա քար նետողներից, որովհետև ինձ՝ Վնմիս. ինձ ունես որպես «գլուխ», որ անվնաս եմ պահում ինձ ծառայող երկնավոր մշակների մարմինները»:

Զար սատանան ջանում էր Քրիստոսին խոստովանողի բերանը փակել, բայց չգիտեր, որ նրա վերքերի բազմանալով, նրա բերանները բազմանում էին: Այսպես, սրբուհի կույս Ագաթեն, ըստ Ասկղիպիադես դատավորի հրամանի նիզակով ծակոտվելիս՝ ասաց. «Ո՛վ Ասկղիպիադես, շնորհակալ եմ ինձանից, որ բազմացրիր իմ բերանը, որով պիտի օրհնեմ Քրիստոսին: Հետևաբար հանդուգնը պարտություն մատնվեց: Գազանի ժանիքները միակ ցորենի /հատիկը/ ալացին, իսկ նա աղոթքներով իր փոխարեն անթիվ հատիկներ բուսեցրեց»:

Սուրբ Եվսեբիոս եպիսկոպոս Եմիսացին ասում է. «Քարկոծողներն ակամայից քարի՛ էին անում և կամովին նրա սիրո գաղափարին աշակերտներ դառնում»: Թեպետ չարերը չարիք էին գործում նրա նկատմամբ, /սակայն/ Աստված իրրև բարերար՝ իր բարի ազնությունն էր հելում վկայի վրա:

Եղբայրները Հովսեփին չարաչար վանատեցին, /սակայն/ Աստված արժանապես նրան պատվեց, իսկ նրանք, ովքեր Ստեփանոսի վրա քարեր էին նետում և ջանում էին արդարին սպանել, տեսնում էին, թե ինչպես է Աստված քարերի միջոցով նրա կյանքը փոխում: Թեպետև կարծում էին, թե նրան մահվան են մատնում, սակայն ակամայից մաքը հեռացնում էին նրանից: Նրա վրա քարեր էին նետում, սակայն նրան չէին վնասում, մինչ նա սիրով նորոգված, առավել ուրախ էր, երբ նա քարկոծվում էր և խոսում էր Քրիստոսի փոխարեն: Թեպետև դպում էր քարերի /պատճառած/ ցավը, սակայն Քրիստոսի սիրո բերկրանքը մոռացնել էր տալիս ցավերը:

Թ. Այս սրակի թանկագին քարը՝ ի պատիվ իր ծառայի և նրան օգնելու համար, Տիրոջ ոտքի կանգնեցնել էր /տե՛ս Գործք է 55/. «Ահա տեսնում եմ երկինքը բացված, Հիսուսին, որ կանգնած է զորության Աստծու աջ կողմում» /հմմտ. Գործք է 55/:

Սուրբ Եվսեբիոսը ասում է. «Տերը անուշադրության չմատնեց, այլ միայն ոտքի կանգնեց, որպեսզի Ստեփանոսին պսակի արժանացնի, նույնիսկ կրկնակի: Քանի որ վկայության տապանակը, ողջակեզների և առաջավորության սեղանները կրկնակի պսակներով էին պսակված. «Պսակի վրա պսակ կպատրաստես» /հմմտ. Ելք Լ 3-4/:

Սուրբ Ստեփանոսը կուսական, անփուտ փայտից տապանակ էր, որ ընդունեց կուսության պսակը, որովհետև մարտիրոսությամբ ողջակեզների սեղան էր: Պսակվեց կրկնակի պսակով, որովհետև մնվում էր վարդապետության հացով, ուստի առաջավորության սեղանի առջև պսակվեց վարդապետական պսակով:

Երկրորդ՝ ըստ Եվսեբիոսի՝ «Առաջին վկան ոտքի կանգնեց, որպեսզի ընդունի երկրորդ վկային»:

Երրորդ՝ ոտքի կանգնեց, որպեսզի օգնի հավատարիմ ծառային:

Չորրորդ՝ ոտքի կանգնեց, որպեսզի Իր սուրբը տեսնի իրեն սրբացնողին: Քանի որ սերը բարու պատճառ է, և ամենայն ոք, որ սիրում է, վայելում է սիրողի սերը:

Հինգերորդ՝ Սուրբ Պրոկղը ասում է. «Ի՞նչ փույթ էր Տիրոջը ոտքի կանգնել հայրական Աթոռից»:

Տեսնելով պատերազմելով նահատակվող զինվորին՝ ոտքի է կանգնում, նրան շնորհելու համար ստի նկատմամբ հաղթությունը:

Նավավարը տեսնելով /Ստեփանոսի/ դեպի նավահանգիստ փութալը՝ նրա առաջ բացում է երկինքը: «Մ'ի երկնչիր.- ասում է,- ո'վ Ստեփանոս, քո հաղթությունը չեմ թողնի առանց հաղթական պսակի: Խորհելով քեզ օգնության ձեռք մեկնել, ոտքի կանգնեցի Իմ Աթոռից: Ինձ՝ Խաչյալիս տեսնելով, համարձակ եղիր քայլերիդ վրա»:

Վեցերորդ՝ Տերը ոտքի է կանգնում Իր ծառային մարտակից լինելու համար: Սուրբ Աթանասը /Տիրոջ բերանով/ այսպես է ասում . «Ոչնչով չտկարանաս Իմ նահատակ, իբր քո սրտի նեղությանը մարտակից չունես պատերազմում, որովհետև ես ի վերուստ տեսնում եմ /այն/, ինչ որ գործում ես Իմ սիրո համար: Քեզ համար պատրաստ է անվախճան հանգիստը, բացված են դրախտի անապական դռները, զարդարված է լուսապայծառ առագաստը, քեզ են սպասում նաև հրեշտակների դասերը, և Իմ ձեռքում է անթառամ պսակը և այլն»:

Դարձյալ՝ Քրիստոս ոտքի կանգնեց, որպեսզի իր ծառայի երեսից սրբի քրտինքը և արտասուքները՝ նրա աչքերից, որ հորդաբար բխում էր սիրելի Հիսուսի փափագի համար, Ում մոտ պատրաստ էր գնալ. և Տերը պիտի սրբի նրա աչքերից ամեն արտասուք /տե՛ս Հայտ. ԻԱ 4/:

Ժ. Այս պսակի պայծառ աստղը և թանկագին քարը՝ անօրենների կողմից քարկոծումն էր: Քարկոծում էին Ստեփանոսին, այսինքն՝ հավերժական քարերով և անշեջ աստղերով զարդարված պսակին: Սատանայի համախոհներն այս արեգակին խավարով պատեցին և լույսով լի լուսնին՝ տիրասպան ամբոխներն արյամբ ներկեցին:

Սա՛ էր Քրիստոսի ձեռքի սպիտակ շուշանը, որը և կարմիր արյամբ ներկվեց, հավաստելով երգ երգոցում ասվածը, թե «Իմ սիրեցյալը սպիտակ է և կարմիր» /երգ ե 10/:

Քարերը կամեցան փշրել այս նառագայթը, բայց Հոգու նառագայթին չհասնելով՝ պատառեցին վարագույրը /տե՛ս Մրկ. ԺԵ 38/, քանդեցին պատնեշ միջնորմը /տե՛ս Եփես. Բ 14/, պայծառ աստղից նետածիգ եղան, պատառեցին քուրձը և ուրախության /հանդերձներ/ հագան:

Սուրբ Պրոկղը ասում է. «Երևելի արեգակը երկնքում ծագում է արուսյակի լույսը ընդունելով, իսկ արդարության արեգակը կուսական արգանդից ծնվելով, աստղերի լույսի կարիքը չունի, այլ անմահ նառագայթներին ծագակից է ընդունում Ստեփանոս նախավկային»:

Ինչպես և Սուրբ Մեծն Ներսեսը կոչվում է արևելյան արեգակի նառագայթ: Այսպես է կոչվում նաև Սուրբ Գրիգոր /Լուսավորիչը/: Այսպես և Ստեփանոսը՝ Քրիստոս արեգակի նառագայթ է կոչվում:

Ուստի Քրիստոսի ծննդյան երկրորդ օրը, իբրև նառագայթի, եկեղեցին կատարում է նրա տոնը[3]: Որի մասին Սուրբ Պրոկղը ասում է. «Ով թագավորական զարմանալի իրադարձություն, երեկ ծնվեց Քրիստոս, այսօր հանդես եկավ Ստեփանոսը»:

---

[3] Հակոբ Նալյան Պատրիարքը ի նկատի ունի ոչ թե տոների կատարման հերթականությունը, այլ տոների պատմական հաստատման կարգը:

Եվ քանի որ առաջինն էր վկաների մեջ, ովքեր Տիրոջ անվան համար հեղեցին /իրենց/ արյունը, ուստի պատվվում է բոլորից առաջ տոնվելով: Որովհետև ինչպես Սուրբ Աթանասն է ասում. «Սա՛ ամենքին հորդորեց հետևել անհառ բարձրության ճանապարհին»:

Վկաներից այս առաջին պտուղը եղավ բազում բարիքների պատճառ, խոստովանողների ու ճգնավորների խմբի առաջ մղող և բարի ելքի, որովհետև նրանից առաջ ոչ ոք Ավետարանի համար չհեղեց /իր/ արյունը:

Արդ, անաստված հրեաները չկարողացան «արեգակին» քարկոծել, նրա ճառագայթին հանդգնեցին, ինչպես և անպտուղ ծառի վրա ոչ ոք քար չի նետում:

Սուրբ Գրիգոր Նյուսացին ասում է. «Մինչ թաղվում էր նետված քարերի տակ, գոչելով թողություն էր խնդրում քարկոծողների համար, իբրև իր երախտավորների»: Իսկ նրանք /դրդված/ իրենց ցանկությունից՝ զայրանում և չէին դադարում քարկոծելուց, մինչև մեծն Ստեփանոսը, իբրև նորափթիթ երփներանգ ծաղիկներով /ծածկված/ կամ /առավոտյան/ թեթև ցողով զովացած, ամենաճաղցր և երանելի ննջմանն արժանացավ:

Սուրբ Աթանասն ասում է. «Սպանմամբ վայր տարվեց «պարարտ եզը», և աներեսներն իսպառ մերկանալով շնորհներից, իբրև գայլեր այծակվեցին երկնավոր հովվի գառան վրա, բոլորի ձեռքերը թաթախվեցին անբիծ արյան մեջ»:

Քարերի կույտերը իբրև անձրևի տարափ տեղում էին նրա վրա: Այդ վայրերը ոռոգվեցին նրա արյունով: Զկար մեկը, որ /քար/ չնետեր նրա վրա, և ոչ էլ այնպիսին, որ իր գոգը դատարկ պահեր անողորմ քարերից: Իսկ մեծ վկան քարերի բազմությունը իր վրա էր հավաքում իբրև անուշահոտ ծաղիկներ՝ դյուրին և հեշտալի /մի բան/ համարելով բոլոր /քարերի/ իր վրա գալը: Քանի որ խորհրդաբար տեսնում էր աստեսանելին և չարչարանքների /ժամանակ մատուցած/ լեղիի ու քացախի փոխարեն մատուցում էր իր արյան վտակները: Եվ թքի ու ապտակների փոխարեն իր հրաշատես երեսն էր ուղղում նետված քարերի դեմ, իսկ փշե պսակի փոխարեն իր սուրբ գլխին ընդունում էր նետված քարերի բազմությունը: Սակայն նա Տիրոջից թողություն էր հայցում նրանց համար, իբրև իր երախտավորների:

Արդ, մինչ վկան կանգնած էր ապիրատ և տիրասպան ազգի մեջ, իբրև աղեղնավորների թիրախ, մարմինը բոլոր կողմերից փշրվում էր: /Այդժամ/ բարձրաձայն գոչում էր. «Տե՛ր Հիսուս, ընդունի՛ր իմ հոգին» /Գործք Է 59/:

ԺԱ. Այս պսակի թանկագին քարը՝ /իր/ հոգու Քրիստոսի ձեռքն ավանդելը եղավ, համաձայն ասվածի. «Տե՛ր Հիսուս, ընդունիր իմ հոգին»:

Քեզ՝ երանելի արեգակիդ կամենում էին խավարեցնել, քեզ՝ նրագիդ հանգցնել, բայց դու աշխարհ գալով, /մեկ/ բարի սերմից անելով, արդ այստեղից հասկերի խրձերով ես չվում դեպի վերին Երուսաղեմ:

Ինչպես Սուրբ Աթանասն է ասում. «Օտարական պանդուխտ կյանքից փութում էր հասնել հայրենի գավառը, ընտրյալների քաղաքը»:

Նաև՝ քարկոծողների համար խնդրելով աղոթում էր, ինչպես և Պողոսը Եփեսոսից քարկոծվելիս ծունկի գալով աղոթեց՝ աշակերտներին հանձնելով Աստծու խնամքին /տե՛ս Եփես. Գ 14/:

Այսպես և Սուրբ Ստեփանոսը, պատրաստվելով դեպի երկինք հեռանալ, ծնրադրելով աղոթում էր, Աստծուց թողություն հայցելով քարկոծողների համար: Նրա արյունը վրեժ չէր խնդրում, ինչպես Արելինը՝ Կայենից, Զաքարիայինը՝ տաճարի մեջ սպանողից, թե Տերը պիտի·տեսնի ու դատի /հմմտ. Ելք Բ 21/: /Ինչպես/ Քրիստոս ասաց. «Որոնց արյունը պիտի պահանջվի այս ազգից» /հմմտ. Ղուկ. ԺԱ 50/:

Սակայն Քրիստոսի դպրատանը ուսանելով նրա անոխակալությունը, քարկոծողների համար թողություն էր խնդրում, և այս աղոթքների ընդունելի լինելու պատճառով, նրանից հետո սկսեց բազմանալ հավատացյալների թիվը, ինչպես և Սուրբ Աթանասն է վկայում:

ԺԲ. Այս պսակի թանկագին քարերը՝ սուրբ հայրերի կողմից նրան տրված զանազան անվանակոչություններն են:

Սուրբ Պրոկղոսը /Կ. Պոլսի պատրիարքական գահին Ոսկեբերանի հաջորդը/ Ստեփանոսին կոչում է Քրիստոսի անման ճառագայթների ծագկից:

Համանուն վկան[4] /նրան կոչում է/ Թագավորի ինքնահյուս հոգևոր պսակ, /Տիրոջ/ գլխի ինքնաբողբոջ հատուկ պսակիչ, հավատի բազմածաղիկ բույս, սիրո անուշահոտ վարդ, հույսի անթառամ ծաղիկ, մշտաթեր այգու պտղատու որդ, անմահության հաղցրահաշակ ողկույզ, Բարձրյալի խաչի երկնահաս նյուղ, ամենայն բարիքների լիություն, խոստովանության անկործանելի աշտարակ, համբերության անսասանելի նահատակ, ժուժկալության խաչը տանող զինվոր, բարեպաշտության հոգևոր զորական, ընդդեմ քրիստոնասպանների անպարտելի հակառակորդ, աստվածաշարչար ազգի անվեհեր հանդիմանող:

Ինչպիսի՞ պատիվ մատուցենք Ստեփանոսին, որ բոլոր վկաների գլուխը պսակեց:

Եվսեբիոս Եմեսացին Ստեփանոսին կոչում է վկաների գլուխ, բոլորից առաջ Քրիստոսից պսակի արժանացած, վկաների հայելի և նպատակ, մահվան խորտակող, Հիսուս արքայի առաքինի զինվոր, մահվան հաղթող և կյանքին արժանավոր, ջերմ սիրով հրեշտակի տեսքի փոխված:

Սուրբ Աթանասը նրան կոչում է պանծալի և անհաղթ վկա, աստղերի մեջ՝ գերափայլ, իրրև արեգակ, Հիսուսի հեզության ամենամոտ աշակերտ, երրորդության օթևան:

Սուրբ Բարսեղը Ստեփանոսին իր անվանը համապատասխան կոչում է վայելչության պսակ և Աստծո ձեռքին արքայական թագ /տե՛ս Եսայի ԾԲ 3/ :

Ստեփանոսը լույսի սյուն է, Սուրբ մոր՝ եկեղեցու Սուրբ որդի: Ստեփանոսը քրիստոնյաներիս պարծանքն է, հրեական ուխտի և հեթանոսական բարբաջումների կործանողը, դեպի Սուրբ Երրորդություն անխոտոր ճանապարհորդող Սուրբ /այր/, շնորհների վկայության հայր և բոլոր մարդկանց նահատակության հորդորիչ:

Ստեփանոսը մեռավ անօրենների /ձեռքով/, սակայն Աստծով հավիտյան կենդանի է և այլն, ում հիշատակը թող օրհնությամբ լինի. Ամեն:

Գրաբարից թարգմանեց
Վիգեն դպիր Ղազարյանը

---

[4] Հավանաբար նկատի ունի Պրոկղոս Դիադորոսին /410–485 թթ./: